ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի

«25» մայիսի 2020թ. թիվ 142 նիստում

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2020

1. Սույն կարգով սահմանվում են մագիստրոսական կրթական ծրագրեր իրականացնող ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետև՝ Կենտրոն) 2020-2021 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության պայմանները և ընթացակարգը:
2. Սույն կարգի իրավական հիմքերն են՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքները, «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը», Կենտրոնի կանոնադրությունը, այլ իրավական ակտեր:
3. Մագիստրատուրան բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի կրթական աստիճան և բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման ձև է:
4. Կենտրոնի մագիստրատուրա կարող է ընդունվել ՀՀ պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի աստիճան ունեցող անձը:
5. 2020-2021 ուսումնական տարում մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպելու նպատակով Կենտրոնի տնօրենի նախագահությամբ ձևավորվում է ընդունող հանձնաժողով: Քննությունների և հարցազրույցների անցկացման համար Կենտրոնի տնօրենի հրամանով ձևավորվում են առարկայական քննական հանձնաժողովներ, որոնց կազմում ընդգրկվում են տվյալ ամբիոնի վարիչը և համապատասխան դասախոսները:
6. - Մագիստրատուրայի **առկա անվճար համակարգ** կարող են դիմել վերջին 2 տարվա համապատասխան մասնագիտությամբ շրջանավարտները: Մրցույթն անցկացվում է քննության ձևով՝ ըստ նախապես հրապարակված համապատասխան հարցաշարերի: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ առարկայական քննական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա: Մրցույթի արդյունքների հավասարության դեպքում առաջնահերթության կարգով հաշվի են առնվում ա) ՄՈԳ-ը, բ) ավարտական աշխատանքի և ամփոփիչ ատեստավորման քննության միավորների գումարը:

- **Բանակից զորացրված (ԲԶ) դիմորդների համար նախատեսված տեղերի շրջանակներում մագիստրատուրայի անվճար համակարգ** կարող են դիմել ՀՀ զինված ուժերում ծառայած և վերջին 3 տարում զորացրված տվյալ մասնագիտությամբ բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող դիմորդները: Ընդունելությունը կատարվում է առանց քննության մրցութային կարգով՝ նախորդ ուսումնառության դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների ՄՈԳ-երի հիման վրա: Անվճար համակարգի մրցույթից դուրս մնացած ՀՀ զինված ուժերում ծառայած դիմորդները առկա կամ հեռակա վճարովի համակարգ ընդունվում են առանց քննության:

- Մագիստրատուրայի **առկա կամ հեռակա ուսուցմամբ վճարովի համակարգ** կարող են դիմել պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված ոչ պետական բուհերի շրջանավարտները: Ըստ տվյալ մասնագիտության ավարտած դիմորդների ընդունելությունը կատարվում է առանց քննության, եթե տվյալ մասնագիտությամբ դիմորդի ՄՈԳ-ը առնվազն 13 է (կամ տվյալ բուհում սահմանված առավելագույն գնահատականի առնվազն 65 տոկոսը), կամ մրցութային՝ քննության կամ հարցազրույցի ձևով, եթե ՄՈԳ-ը 13-ից ցածր է:

Մասնագիտության փոփոխության պարագայում ընդունելությունը կատարվում է միայն առկա կամ հեռակա վճարովի համակարգում: Ընդունելության վերաբերյալ որոշումները կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ առարկայական քննական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա:

7. Մասնագիտության փոփոխության պարագայում ընդունելությունը կատարվում է միայն վճարովի համակարգում:

7.1 <<Իրավագիտություն>> մասնագիտությամբ ընդունելության մրցույթին կարող են մասնակցել բացառապես <<Իրավագիտություն>> կամ հարակից մասնագիտությամբ բարձրագույն կրթություն կամ գիտական աստիճան ունեցող դիմորդները:

7.2 <<Ֆարմացիա>> մասնագիտությամբ անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել միայն <<Դեղագիտություն>> և

<<Դեղագործական քիմիա>> մասնագիտության շրջանավարտները, իսկ վճարովի ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել <<Դեղագիտություն>> և <<Դեղագործական քիմիա>> մասնագիտության և հարակից մասնագիտությունների շրջանավարտները:

8.Մագիստրատուրա ընդունվելու համար դիմորդները Կենտրոնի առցանց https://www.isec.am/online-admission-form.html հարթակում ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը ՝

- մագիստրատուրայի ընդունելության դիմում-հայտ,
- անձնագիր/նույնականացման քարտ,
- բարձրագույն կրթության դիպլոմ և հավելված,
- 3x4 չափի լուսանկար,
- զինվորական գրքույկ՝ առկայության դեպքում:

Փաստաթղթերի ընդունման համար որևէ գումար չի գանձվում:

9. Մագիստրատուրայի ընդունելության դիմում-հայտը լրացնելիս դիմորդը, ըստ նախապատվության, կարող է նշել առավելագույնը 2 մագիստրոսական ծրագիր:

Մագիստրոսական ծրագիրը գործում է առնվազն թվով 5 ուսանողի առկայության դեպքում: Ըստ նպատակահարմարութան՝ ՀՀ ԳԱԱ գիտական կազմակերպությունների և Կենտրոնի միջև կնքված համաձայնագրի համաձայն, որոշ մագիստրոսական ծրագրեր կարող են իրականացվել առնվազն թվով 3 ուսանողի առկայութան դեպքում:

9.1 Դիմումում նշված մագիստրոսական ծրագրերից որևէ մեկի չգործելու դեպքում դիմորդը մասնակցում է 2-րդ ծրագրի ընդունելության մրցույթին:

10. Մագիստրատուրայի դիմում-հայտերի ընդունումը կատարվում է հետևյալ ժամկետներում.

Առկա անվճար համակարգ՝ հունիսի 8 – 30,

Անվճար (բանակից զորացրված-ԲՋ դիմորդների համար նախատեսված տեղերի շրջանակներում) համակարգ՝ հունիսի 8 – օգոստոսի 26,

Առկա վճարովի համակարգ՝ հունիսի 8 - օգոստոսի 21,

Հեռակա վճարովի համակարգ՝ հունիսի 8 – սեպտեմբերի 25:

11.Մագիստրատուրայի վճարովի համակարգ ընդունված դիմորդների հրամանագրումը կատարվում է 15-օրյա ժամկետում, ուսման վարձը վճարելուց հետո՝ ըստ մասնագիտությունների և մագիստրոսական ծրագրերի: